ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ՄԻՊ աշխատակազմի կողմից «Երևանի N 34 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ և «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ կատարված այցերի վերաբերյալ

Սույն թվականի մայիսի 22-ին Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի, ԱԺ Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանի, ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռուստամ Բաքոյանի, ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Հովիկ Աղազարյանի, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների, ինչպես նաև Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Ազատյանի հետ համատեղ, այցելություն են իրականացրել «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ «Ձորակ» կենտրոն) և «Երևանի N 34 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ (այսուհետ՝ Մանկապարտեզ):

Բացի այդ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչները 2023 թվականի հունիսի 16-ին և 21-ին չհայտարարված այց են իրականացրել Մանկապարտեզ:

Այցի ընթացքում Մանկապարտեզում իրականացվել է շենքային պայմանների ուսումնասիրություն, կիրառվել են նաև դիտման և զրույցի մեթոդներ, մասնավորապես՝ անցկացվել են առանձնազրույցներ երեխաների և վարչակազմի հետ, կիրառվել են պրոյեկտիվ մեթոդներ երեխաների հետ աշխատանքում:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Մանկապարտեզը գտնվում է «Երևան քաղաքի Քանաքեռի շրջանցիկ թունել» հասցեում և տեղակայված է «Ձորակ» կենտրոնի մասնաշենքերից մեկի առաջին հարկում: Ընդ որում, «Ձորակ» կենտրոնի նպատակը սահմանվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող՝ 18 տարին լրացած անձանց շուրջօրյա և ցերեկային խնամքի տրամադրումը ՀՀ կառավարության 2015թ. ապրիլի 2-ի թիվ 381-Ն որոշմամբ, հաշվի չառնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի N 25-Ն

հրամանով հաստատված նախադպրոցական հաստատությունների շենքերի պահանջվող շինարարական նորմերը: Հարկ է նշել նաև, որ Մանկապարտեզը տվյալ տարածքում գործել է դեռևս 1989 թվականից:

Ուստի, անհրաժեշտություն է առաջանում քննարկման առարկա դարձնել երեխաների կրթության իրավունքի իրացման, ինչպես նաև՝ համակողմանի և ներդաշնակ զարգացման համար անվտանգ միջավայրի ապահովման հնարավորությունների հարցերը՝ երեխաների վրա անդառնալի հետևանքներ թողնելու համատեքստում:

Այսպես, այցերի ընթացքում պարզվել է, որ Մանկապարտեզում գործում է նախադպրոցական տարբեր տարիքի երեխաների համակազմով ձևավորված 2 խումբ, որտեղ իրականացվում են տարիքային տարբեր խմբերի կրթական և զարգացման ծրագրեր:

Պետք է նշել, որ կրթություն ստանալու իրավունքն անձի սահմանադրական իրավունքն է: Այն երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ-ի կողմից վավերացրած մի շարք միջազգային փաստաթղթերով: Ավելին, ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ի[1] 4-րդ նպատակն է կրթության իրավունքի ապահովումը՝ որպես գերակայություն: Նպատակի բաղադրիչներից է՝ բոլոր աղջիկների և տղաների համար որակյալ վաղ մանկության զարգացման հնարավորությունների, խնամքի և նախադպրոցական կրթության հասանելիությունը[2]:

Նախադպրոցական կրթություն ստանալու իրավունք ունի նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա: «Նախադպրոցական կրթություն ստանալու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նախադպրոցական կրթությունը, երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման, դաստիարակության, ուսուցման և խնամքի գործընթացն է: Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է նախադպրոցական կրթության բնագավառի ներառականությունը, մատչելիությունը, հասանելիությունն ու որակը՝ որպես յուրաքանչյուր երեխայի

---

[1] Տե՛ս ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները, հասանելի է http://un.am/hy/p/sustainable-development-goal-4 հղումով:

[2] Տե՛ս ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները, նպատակ 4, կետ 2, հասանելի է https://un.am/hy/p/sustainabledevelopment-goal-4 հղումով:

կրթության իրավունքի ապահովման, զարգացման ու դաստիարակության, անվտանգ միջավայրի ստեղծման, կյանքի, առողջության պահպանման և ամրապնդման կարևոր երաշխիք: Հետևաբար, նախադպրոցական կրթությունը պետք է ապահովի երեխայի ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը՝ պահպանելով և ամրապնդելով ֆիզիկական և հոգեկան առողջությունը:

Երեխայի՝ վաղ մանկության շրջանում կրթություն ստանալը կարևոր է երեխայի զարգացման համար: Նախադպրոցական շրջանում կրթություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը չապահովելն ազդեցություն է ունենում երեխայի ապագայի վրա և սահմանափակում է վերջինիս՝ իր լիարժեք ներուժին հասնելու հնարավորությունները:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից հրապարակված վերլուծության՝ վաղ տարիքում նույնիսկ մեկ տարվա ընթացքում նախադպրոցական կրթություն ստացող երեխաների մոտ առավել մեծ հավանականությամբ են զարգանում այն կարևոր հմտությունները, որոնք անհրաժեշտ են դպրոցում հաջողության հասնելու համար[3]:

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության(ՅՈՒՆԵՍԿՕ) կրթական շենքերի նախագծման և կառուցման վերաբերյալ առաջարկությունների համաձայն[4]՝ մանկապարտեզի շենքը պետք է նախագծված լինի այնպես, որ՝

- ապահովի երեխաների համար անվտանգ և առողջ միջավայր՝ ներառելով խաղերի և ուսումնական գործունեության համապատասխան տարածք,
- բնական լույսն ու օդափոխությունը առավելագույն լինեն, իսկ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ նվազագույնի հասցվի,
- խթանի բոլոր երեխաների, ներառյալ հաշմանդամություն ունեցող, ներառականությունն ու բազմազանությունը,
- ապահովված լինի ճկուն և հարմարվող՝ փոփոխվող կարիքներին համապատասխան միջոցներով, ինչպես նաև՝ ունենա տարածքներ մի

[3] Տե՛ս «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2021թ. տարեկան հաղորդում https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

[4] https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000065588

շարք միջոցառումների համար, այդ թվում՝ շենքի ներսում և բակում խաղերի կազմակերպման, ուսուցման և սոցիալականացման համար,

- ապահովի անվտանգ և ապահով միջավայր, ինչպես նաև միջոցներ ձեռնարկվեն վթարների, հիվանդությունների և արտակարգ իրավիճակների կանխարգելման և դրանց արձագանքման համար,
- ապահովված կայուն նյութերով և շինարարական մեթոդներով, որոնք նվազագույնի են կհասցնեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և կնպաստի երկարաժամկետ դիմացկունությանը և ֆունկցիոնալությանը:

Մինչդեռ՝ այցերի ընթացքում արձանագրվել են Մանկապարտեզ հաճախող երեխաների մանկության շրջանում կրթություն ստանալու իրավունքի իրացման պատշաճ ապահովման հետ կապված մի շարք խնդիրներ:

Մասնավորապես՝ Մանկապարտեզում գործում է 2 տարիքային խումբ՝

- 1-ին խումբ՝ 3-5 տարեկան (25 երեխա)
- 2-րդ խումբ՝ 4-6 տարեկան (30 երեխա):

1-ին խմբի ննջասենյակի վերնահարկում գտնվում է «Ձորակ» կենտրոնում խնամք ստացող անձանց խաղասենյակը, իսկ 2-րդ խմբի ննջասենյակի պատուհանից բացվող տեսարանը «Ձորակ» կենտրոնի բակն է, որտեղ զբոսնում և իրենց ազատ ժամանակն են անցկացնում խնամք ստացող անձինք: Նշվածի հաշվառմամբ մանկապարտեզի վարչակազմը տեղեկացրել է, որ պատուհանները երբևէ չեն բացում և մշտապես փակված են լինում շերտավոր վարագույրներով, իսկ օդափոխություն կատարում են այն ժամանակահատվածում, երբ երեխաները դրսում են լինում: (Նկար 1)

Մանկապարտեզի և «Ձորակ» կենտրոնի բակերում՝ շենքի կողային հատվածով առկա ազատ տարածքով հնարավոր է առանց որևէ խոչընդոտի տեղաշարժվել, ինչը կանխելու նպատակով, ըստ մանկապարտեզի աշխատակիցների, տարիներ առաջ որոշվել էր արգելապատի միջոցով սահմանափակել այդ հատվածի ելումուտը, սակայն՝ ապարդյուն: (Նկար 2)

Այս կապակցությամբ հարկ է վկայակոչել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի «ՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 04-Ն հրամանը: Նշված հրամանով հաստատվել են ՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը: Հրամանի 140-րդ կետի համաձայն՝ հատուկ նշանակության նախադպրոցական կազմակերպությունների, սոցիալական նշանակության տուն-ինտերնատների հողամասերը պետք է ունենան 1,6մ-ից ոչ պակաս բարձրությամբ ցանկապատ, իսկ մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար շուրջօրյա խնամքի ծառայություն մատուցող կազմակերպությունների և հոգենյարդաբանական ինտերնատների հողամասերը՝ 2մ-ից ոչ պակաս բարձրությամբ ցանկապատ:

Հարկ է նշել, որ օրենսդրությամբ նախատեսված նման պահանջների սահմանումը լրացուցիչ երաշխիք է ինչպես հատուկ խնամք ստացող անձանց, այնպես էլ այլոց համար անվտանգ և ապահով միջավայր ապահովելու տեսանկյունից, ինչը պահպանված չի եղել «Ձորակ» կենտրոնի պարագայում:

Ուստի, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել «Ձորակ» կենտրոնի շենքային պայմանները ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի նշված հրամանով նախատեսված պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Անվտանգ և ապահով միջավայր ապահովելու տեսանկյունից մեկ այլ կարևոր երաշխիք է հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց խնամքի հաստատություններում սպասարկող անձնակազմի անբավարարությունը և պրոֆեսիոնալիզմը:

«Ձորակ» կենտրոն իրականացված այցերի արդյունքում արձանագրվել է, որ անձանց խնամքի ապահովման հարցում ներգրավված են ոչ բավարար քանակով աշխատակիցներ, ինչն իրական դժվարություններ կարող է առաջացնել անձնակազմի համար Կենտրոնում պացիենտների պատշաճ հսկողության և անվտանգության ապահովման տեսանկյունից:

Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի 8-րդ ընդհանուր զեկույցի 42-րդ կետի համաձայն՝ կադրային ռեսուրսները պետք է համարժեք լինեն քանակի, կազմի (հոգեբույժ, թերապևտ, բուժքույր, հոգեբան, աշխատանքային թերապիա

իրականացնող անձ, սոցիալական աշխատող և այլն), ինչպես նաև մասնագիտական փորձի և պատրաստվածության տեսակետից[5]:

Բացի այդ, Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են տեսանյութեր, որից պարզ է դառնում, որ «Ձորակ» կենտրոնի խնամարկյալները երեկոյան ժամերին ազատորեն դուրս են գալիս կենտրոնի տարածքից, ինչը կարող է վտանգավոր լինել ոչ միայն խնամարկյալի, այլ նաև տարածքի բնակիչների, այդ թվում՝ երեխաների համար: Այդ մասին տեղեկացրել են նաև բնակիչները, մասնավորապես՝ նշելով, որ հաստատությունից փախուստի դեպքեր են եղել:

Ուստի, անհրաժեշտ է ամբողջական գնահատման ենթարկել նման հաստատությունների կարիքները, ինչի արդյունքները կօգնեն սահմանել պացիենտների և բժշկական կամ սպասարկող անձնակազմի, այդ թվում՝ տարածքի պահպանությունն ապահովող անվտանգության աշխատակիցների օպտիմալ հարաբերակցություն:

Այս առումով, հարկ է նշել, որ Մանկապարտեզի աշխատակիցներն առանձնազրույցների ընթացքում հայտնել են, որ ստեղծված իրավիճակին ընտելացել են. մեջբերում՝ «...սովորել ենք՝ մենք էլ, երեխաներն էլ»:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ «Ձորակ» կենտրոնում խնամք ստացող անձինք իրենց պատուհաններից հաճախ առարկաներ են նետում մանկապարտեզի օգտագործման տարածք: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ սույն թվականի հունիսի 21-ին իրականացրած այցի ընթացքում ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներն ականատես են եղել միջադեպի, երբ երկրորդ հարկից «Ձորակ» կենտրոնում խնամք ստացող անձն իր է նետել մանկապարտեզի բակի ուղղությամբ: (Նկար 3)

ՄԻՊ աշխատակազմի արձանագրմամբ՝ այցի պահին «Ձորակ» կենտրոնում խնամք ստացող իգական սեռի ներկայացուցիչն առանց վերնահագուստի 3-րդ հարկից ժեստերի միջոցով փորձում էր հաղորդակցվել բակում գտնվող անձանց հետ:

Այցի ընթացքում արձանագրվել է նաև, որ մանկապարտեզի շենքը խոնավ է և ըստ աշխատակիցների՝ արտաքին վերանորոգումն ապարդյուն է: (Նկար 4)

[5] Տե՛ս https://rm.coe.int/1680696a72 կայքէջում:

Մանկապարտեզը չունի առանձին սանհանգույց աղջիկների ու տղաների համար, այլ առկա է մեկ սանհանգույց, որը չի համապատասխանում գործող օրենսդրական պահանջներին: Հարկ է նշել նաև, որ տվյալ սանհանգույցից օգտվում են նաև աշխատակիցները՝ այլ սանհանգույցի բացակայությամբ պայմանավորված: (Նկար 5)

Բացի այդ, մանկապարտեզը չունի դահլիճ երաժշտական և մարմնամարզական պարապմունքների համար, որի պատճառով դրանց բովանդակային ապահովման համար ննջասենյակներն են օգտագործվում իբրև դահլիճ: 2023թ. հունիսի 16-ին կատարված այցի պահին արձանագրվել է նաև, որ դահլիճի բացակայությամբ պայմանավորված՝ երեխաների մասնակցությամբ միջոցառում կազմակերպելու համար տնօրենի գլխավորությամբ երեխաներն այցելել էին Մանկապարտեզին չպատկանող այլ տարածք:

Արձանագրվել է, որ մանկապարտեզի շենքային և բակային պայմանները՝ որպես երեխաների իրավունքների լիարժեք իրացման անվտանգ միջավայր, պատշաճ ապահովված չեն: Մասնավորապես, նախադպրոցական հասակի երեխաների համար խմբային հրապարակները բաժանված չեն խաղային և մարմնամարզային տեսակների, ինչպես նաև հաստատությունում երկու խմբերից յուրաքանչյուրի համար չկա տեղակայված 40 մ^2 ստվերածածկ, արևից և տեղումներից պաշտպանվելու համար, որպիսի պահանջը նախատեսված է Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 857 հրամանի 2.2 կետի «գ» ենթակետով:

Բացի այդ, մանկատան բակային հատվածը հնարավորություն չի տալիս յուրաքանչյուր խմբի համար առանձնացնել մանկական խմբային հրապարակներ: Հաստատության բակում տեղադրված էր միայն սահարան, իսկ դրա հարակից տարածքում առկա էին երկաթե սուր ելուստներով տաղավար և բակային խաղերի կազմակերպման համար վտանգավոր տարածքներ (Նկար 6):

Մինչդեռ, Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 857 հրամանի 2.2 կետի «դ» ենթակետի համաձայն՝ խաղահրապարակների գույքը պետք է լինի տարիքային հասակին համապատասխան: Գույքի մակերեսը չպետք է ունենա սուր ծայրեր, անհարթություններ և դուրս եկած հեղույսներ (բոլտեր): Գույքի հումքը պետք է ունենա բարձր որակ, լինի դիմացկուն, երեխաների

պատահական կոտրվածքներից և վնասվածքներից խուսափելու համար: Կոնստրուկցիաների (կառույցների) ծածկույթները պետք է լինեն ջրադիմացկուն:

Հաստատության բակային հատվածը տեղակայված է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող խնամքի կենտրոնի սենյակների տեսադաշտում, որի հետևանքով մանկապարտեզի երեխաների համար նախադպրոցական կրթության ծրագրի բովանդակային ապահովման ժամանակ բակային միջոցառումներ (խաղեր, մարմնամարզություն) իրականացնելիս՝ աշխատակազմը հավելյալ վերահսկում է նաև «Ձորակ» կենտրոնում խնամք ստացող անձանց անմիջական ազդեցությունը: Այսպես, օրինակ, խաղերը կազմակերպվում են այնպիսի հեռավորությամբ, որ հանկարծ պատուհաններից որևէ բան չնետեն երեխաների ուղղությամբ:

Այսպիսի պայմաններում, թեև անմիջական ազդեցություններն աշխատակիցների կողմից հնարավոր է որոշակիորեն վերահսկել, սակայն երեխաների նկատմամբ առկա են նաև միջնորդավորված ազդեցություններ՝ ձայներ, տեսարաններ, որոնց ազդեցությունն ուղղակիորեն դուրս է աշխատակիցների վերահսկողությունից (կից՝ վիդեո): Աշխատակիցների կողմից իրավիճակի վերահսկումը հիմնականում իրականցվում է երեխաներին զգուշացնելով՝ օրինակ՝ «այս ուղղությամբ չգնաք, չվազեք, վերև մի նայեք, ձայներին ուշադրություն մի դարձրեք և այլն»:

Ըստ մանկապարտեզի աշխատակիցների՝ երեխաներն երբեմն հարցեր են տալիս մանկապարտեզի շենքում և բակում լսվող ձայների, ինչպես նաև լուսամուտներից երևացող անձանց վերաբերյալ, և իրենք փորձում են բացատրել, որ վերջիններս չվախենան: Մինչդեռ յուրաքանչյուր աշխատակից բացատրում է երեխային իր սուբյեկտիվ մոտեցումների և գիտելիքների հիման վրա, քանի որ մասնագետները չունեն համապատասխան գիտելիքներ այդ ուղղությամբ:

ՄԻՊ աշխատակազմի հոգեբան փորձագետի ներգրավմամբ երեխաների հետ իրականացված աշխատանքների արդյունքները վկայում են, որ երեխաների մեծամասնության մոտ առկա է արտահայտված վախ հանկարծակի ուժեղ ձայներից, մարդկանցից: Մասնավորապես, երեխաները պրոյեկտիվ մեթոդների կիրառման և զրույցների ընթացքում նշել են, որ «հաճախ լսում են ինչ-որ ձայներ, բայց չեն հասկանում, թե որտեղից են լսվում այդ ձայները, քանի որ այդ ձայները արձակող

մարդը թաքնվել է», իսկ երեխաներից մեկը նշել է, որ «չար մարդիկ կան շենքում թաքնված, որ հենց քնեն՝ այդ մարդիկ իրենց կվախեցնեն», մեկ այլ երեխա էլ պատմել է, որ «մի մարդու է տեսնում լուսամուտից, որ միշտ ջղայն է, ու ինքը վախենում է այդ մարդուց»:

Արձանագրված խնդիրներից է նաև այն, որ երեխաների քնի կազմակերպման գործընթացը երբեմն լիարժեք չի իրականացվում, քանի որ երեխաների ննջասենյակը տեղակայված է «Ձորակ» կենտրոնի բակային հատվածում և քնի ժամին հաճախ են լսվում ձայներ:

Բացի այդ, ՄԻՊ աշխատակազմի՝ համայնքի բնակիչների, այդ թվում՝ Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողների հետ զրույցներից պարզվել է, որ նշված պայմաններում նախադպրոցական կրթության կազմակերպումը բացասաբար է ազդում երեխաների հոգեկան առողջության զարգացման վրա: Օրինակ, ծնողներից մեկը նշել է, որ «չնայած նրան, որ իր երեխան արդեն 3 տարի է այլևս մանկապարտեզ չի հաճախում, սակայն պարբերաբար գիշերները մղձավանջային երազներից արթնանում է և խոսում այն մասին, որ տեսել է մանկապարտեզի չար մարդկանց»: Ներկայում մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողներից մեկն էլ նշել է, որ «Ձորակ» կենտրոնում խնամք ստացող անձինք երեխաների ուղղությամբ հաճախ են առարկաներ նետում: Նմանատիպ դեպքի ականատես են եղել և արձանագրել նաև ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչները:

Նշվածը վկայում է այն մասին, որ նկարագրված պայմաններում երեխաների կրթությունը և խնամքը կազմակերպելը ուղղակի և անուղղակի կերպով ազդում է երեխաների վարքի կամ հուզական վիճակի վրա՝ խաթարելով վերջիններիս բնականոն զարգացումը:

Ավելին, ի պատասխան նշված հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի գրության՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն դիրքորոշում է հայտնել առ այն, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունները չեն կարող ներկառուցվել կամ կցակառուցվել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոններին՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի N 25-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.04-2022 «Նախադպրոցական հաստատությունների շենքեր. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի 54-րդ կետը, որի համաձայն՝ նախադպրոցական

ուսումնական հաստատությունների շենքերը, որպես կանոն, պետք է նախագծվեն առանձին կառուցված՝ առանձնացված հողամասի տարածքում: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցման և վերակառուցման համար պահանջվող տարածքների սակավության պայմաններում, ինչպես նաև կառուցապատման բարձր խտության դեպքերում թույլատրվում է բնակելի շենքերի ճակատներին ներկառուցված, ներկառուցված-կցակառուցված և կցակառուցված նախադպրոցական ուսումնական հաստատությունների նախագծումը՝ ոչ ավելի, քան 100 տեղ հզորությամբ: Կառուցման և վերակառուցման նախագծերի մշակման դեպքում նախադպրոցական ուսումնական հաստատությունները կարող են նախագծվել շենքերի համալիրների տեսքով (նախադպրոցական կրթության համալիրներ), որոնք բաղկացած են առանձին կառուցված և/կամ բնակելի շենքերի ճակատներին ներկառուցված, կցակառուցված մասնաշենքերից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ Մանկապարտեզի՝ «Ձորակ» կենտրոնի մասնաշենքերից մեկի առաջին հարկում տեղակայված լինելը և նման պայմաններում երեխաների նախադպրոցական կրթության ապահովումը չեն բխում երեխայի լավագույն շահից և խախտում են մի շարք միջազգային և ներպետական իրավական նորմերով նախատեսված պահանջներ:

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է խնդրի լուծման առնչությամբ հրատապ և կոնկրետ միջոցառումների իրականացումը, ինչը հնարավորություն կտա բացառել երեխայի՝ մանկության շրջանում կրթություն ստանալու իրավունքի շարունակական խախտման դեպքերը, ինչպես նաև կապահովի անվտանգ և ապահով միջավայրում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կազմակերպումը:

Խնդրի ամբողջական լուծման գործընթացում կարևոր է նաև հաշվի առնել համայնքի բնակիչների շահերը, և քննարկման առարկա դարձնել վերջիններիս կողմից բարձրացված հարցերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- *հրատապ քայլեր ձեռնարկել համայնքի երեխաների նախադպրոցական կրթության իրավունքի իրացման համար անվտանգ, ապահով, ինչպես նաև ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացմանը նպաստող պայմաններով միջավայր ապահովելու ուղղությամբ՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնների կառույցներին նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ ներկառուցվելու և կցակառուցվելու արգելքը,*
- *հրատապ քայլեր ձեռնարկել Մանկապարտեզ հաճախող երեխաների պատշաճ խնամքը կազմակերպելու ուղղությամբ,*
- *վերանայել «Ձորակ» կենտրոնում աշխատակիցների հաստիքների թիվը, քայլեր ձեռնարկել դրանց համալրման ուղղությամբ՝ ապահովելով բավարար հսկողություն և անվտանգ միջավայր,*
- *մշակել վերապատրաստման մոդուլներ և իրականացնել համապատասխան վերապատրաստումներ՝ ինչպես խնամքի հաստատությունների հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ վարվեցողության կանոնների և անվտանգ միջավայր ապահովելու, այնպես էլ երեխաների նախադպրոցական կրթության իրավունքի ապահովման համար անհրաժեշտ չափորոշիչների վերաբերյալ,*
- *խնդրի ամբողջական լուծման գործընթացում հաշվի առնել նաև համայնքի բնակիչների շահերը, և քննարկման առարկա դարձնել վերջիններիս կողմից բարձրացված հարցերը:*

Նկար 1

Նկար 2

Նկար 3

Նկար 4

Նկար 5

Նկար 6